«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

22 Սեպտեմբերի 2022, N 1 - 9 (հարցման կարգով)

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության մրցույթով անցած, ուսման վարձը չվճարած, բանակ զորակոչվելու կապակցությամբ 2021-2022 ուսումնական տարում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի «061104.00.6 Տեղեկատվական համակարգեր» մասնագիտության «061104.01.6 Տեղեկատվական համակարգեր» կրթական ծրագրի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսին (վճարովի հիմունքներով) կցագրված, ժամկետից շուտ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետում չդիմած դիմորդ Էրիկ Տիրայրի Գրիգորյանին 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում հրամանագրելու համար ուսման վարձը վճարելու թույլտվություն տալու մասին

Լսելով և քննարկելով՝

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության մրցույթով անցած, ուսման վարձը չվճարած, բանակ զորակոչվելու կապակցությամբ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2021 թվականի սեպտեմբերի 27-ի N ՈՒՄ /122/ 3-Ա հրամանով 2021-2022 ուսումնական տարում համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի «061104.00.6 Տեղեկատվական համակարգեր» մասնագիտության «061104.01.6 Տեղեկատվական համակարգեր» կրթական ծրագրի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսին (վճարովի հիմունքներով) կցագրված, 2022 թվականի մարտի 21-ին զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետում չդիմած (07.06.2022) դիմորդ Էրիկ Տիրայրի Գրիգորյանին 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում հրամանագրելու համար ուսման վարձը վճարելու թույլտվություն տալու մասին հարցը:

Հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2022 թվականի հունվարի 26-ի N 05/11.2/548-2022 գրությամբ առաջարկվել է ազգային բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցած և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման հարցը քննարկել համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ հաշվի առնելով պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակը (առողջական, հոգեբանական խնդիրներ, զինվորական կոմիսարիատներից զինվորական գրքույկների տրամադրման ուշացումներ և այլն), ինչպես նաև այն հանգամանքը, որ Էրիկ Տիրայրի Գրիգորյանը սահմանված ժամկետում ուսման վարձը վճարելու թույլտվության և հրամանագրման համար դիմել է ոչ սովորական ժամկետում, քանի որ շուտ է զորացրվել՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Կցագրված դիմորդ Էրիկ Տիրայրի Գրիգորյանին** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի «061104.00.6 Տեղեկատվական համակարգեր» մասնագիտության **«061104.01.6 Տեղեկատվական համակարգեր» կրթական ծրագրի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսում 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից հրամանագրելու համար թույլատրել վճարել 1-ին կուրսի 1-ին կիսամյակի ուսման վարձը**:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2022 թ. սեպտեմբերի 22
Երևան